ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 2, 1958 Общественные науки

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Ե. Խալեյան

ԱՎԻԱՑԻԱՅԻ ՄԱՐՇԱԼ ԱՐՄԵՆԱԿ ԽԱՆՖԵՐՅԱՆ (ՍԵՐԳԵՅ ԽՈՒԴՅԱԿՈՎ)

Սովետական Բանակի ռազմաօդային ուժերի անձնակազմում ականավոր դեմքերից է եղել հայ ժողովրդի զավակ, ավիացիայի մարշալ Արմենակ Արտեմի Խանֆերյանը, որն իր գիտակցական ամբողջ կյանքը անց է կացրել Սովետական Բանակում, շարքային զինվորից աճել, արժանացել մարշալի կոչման, Հայրենական Մեծ պատերազմում մարտական փառքով պսակել իր անունը։

Ա. Խանֆերյանը ծնվել է 1902 թ. Լեռնային Ղարաբաղի Վերին Թաղլար գյուղում, վեց տարեկան հասակում զրկվելով հորից, մնացել է պապի խնամքին, որը նրան նախնական կրթության է տվել ծխական դպրոցում։

1916 թ. Արմենակը, թողնելով պապական տունը, ոտքով ուղևորվում է Եվլախ, այնտեղից ապրանքատար բաց վագոնի հարթակին թառած հասնում Բաքու։ Բաքվում նա ապրում է հորաքրոջ մոտ, որն որբացած եղբոր որդուն ընդունում է գրկաբաց, ցուցաբերում մայրական հոգատարություն։ Արմենակը հորաքրոջ ամուսնու միջնորդությամբ, որ աշխատում էր Բալախանի շրջանի Մանթաշևի գործարանի գրասենյակում, ընդունվում է նույն գործարանում որպես բանվոր և որոշ ժամանակից հետո դառնում հեռախոսավար։

Արմենակը շատ ընդունակ երիտասարդ էր. այս նոր միջավայրում նա համառ կերպով զբաղվում է ինքնազարգացմամբ, շատ շուտով տիրապետում ռուսերեն լեզվին։ Առաջավոր բանվորներից նա շարունակ հայերեն և ռուսերեն անլեգալ գրքեր է ստանում ու կարդում, 1918 թ. դեռևս պատանի հասակում ներգրավվում է ռևոլյուցիոն աշխատանքի մեջ։

Բաքվի հերոսական Կոմունայի օրերին երիտասարդ Արմենակը կամավոր մտնում է Կարմիր գվարդիա «Ժելեզնի օտրյադ», ու զենքը ձեռքին Պետրովի[1] զորախմբում մասնակցում Բաքվի պաշտպանության մարտերին։ Կոմունայի անկումից հետո այդ նույն զորամասի հետ էվակուացվում է Աստրախան։ Այստեղ Կարմիր Բանակի շարքերում նա իր համագյուղացիներ Ալեքսան և Տիգրան Գալստյանների, Լալարեկյանի և մյուսների հետ միասին մարտնչում է 1919 թ. Ցարիցինի պաշտպանության դիրքերում, քաղաքացիական կռիվների այլ ճակատներում։

Ա. Խանֆերյանը դառնում է սովետական երիտասարդ բանակի ռազմիկ, իր առաջին մկրտությունը ստանալով ինտերվենտների և սպիտակգվարդիա-

---

[1] Պետրովը գնդակահարված 26 կոմիսարներից մեկն է, նրա ձերբակալությունից հետո ատրյադի հրամանատարությունը անցնում է նրա տեղակալ՝ Տամարկինին։

կանության դեմ 1918—1920 թթ. Կարմիր Բանակի մղած հերոսական մարտերում։

1923—1924 թթ. Խանֆերյանը սովորում և ավարտում է Թբիլիսիի հեծելաղորային դպրոցը։ Այդ տարիներին նա ընդունվում է նաև Կոմունիստական պարտիայի շարքերը։ Հետագայում նշանակում է ստանում և ուղևորվում Ըզյասլավ քաղաքը—Ուկրաինա։ Այստեղ նա ծառայում է մինչև 1931 թ., ձեռք է բերում հրամանատարական հմտություն, մարտական և քաղաքական պատրաստություն, վարում է մի շարք պատասխանատու պաշտոններ՝ ռազմական դպրոցի պետ, գնդի շտաբի պետ և այլն։

1931 թ. վերադաս հրամանատարության միջնորդությամբ Խանֆերյանը որպես լավագույն հրամանատար գործուղվում է Մոսկվա՝ Սովետական Բանակի ռազմաօդային ուժերի Ակադեմիայում սովորելու։ 1936 թ., ակադեմիան ավարտելուց հետո, Արմենակ Խանֆերյանը նշանակվում է Բելոռուսիայի ռազմական օկրուգի ռազմաօդային ուժերի պետ։ Պատերազմի սկզբից մասնակցում է գերմանա-ֆաշիստական զավթիչների դեմ մղվող կատաղի մարտերին։

Պատերազմի առաջին ամիսներից սկսած Սովետական Բանակի Գերագույն Գլխավոր Հրամանատարության հանձնարարությամբ Խանֆերյանը մասնակցում է ռազմաօդային ուժերի ղեկավարման աշխատանքներին տարբեր պոստերում։ Նա ղեկավարել է արևմտյան ռազմաճակատի ռազմաօդային ուժերը, որպես նրա հրամանատարը, եղել է ՍՍՌՄ ռազմաօդային ուժերի գլխավոր շտաբի պետ, ինչպես նաև ավիացիոն բանակի հրամանատար, որը գործել է թե Արևմտյան և թե Հեռավոր Արևելյան ռազմաճակատներում։ 1943—1944 թթ. ավիացիայի գծով հանդես բերած զորավարական հմտության ու անձնական արիության համար Սովետական կառավարությունը Խանֆերյանին պարգևատրում է բազմաթիվ մարտական շքանշաններով ու մեդալներով։ Պատերազմի տարիներին նա արագորեն աճում է, անցնելով զեներալական կոչումների բոլոր աստիճանները, 1944 թ. օգոստոսի 19-ին ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահության հրամանագրով արժանանում ավիացիայի մարշալի զինվորական բարձր կոչմանը, դառնում է Սովետական Բանակի ռազմաօդային ուժերի ճանաչված ղեկավարներից մեկը։

1945 թ. փետրվարի սկզբին Ղրիմում Յալթայի մոտ տեղի է ունենում դաշնակից երեք պետությունների՝ ՍՍՌՄ, ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի ղեկավարների կոնֆերանսը։ Ղեկավարներից բացի, այդ կոնֆերանսին մասնակցում են նաև Արտաքին Գործերի մինիստրներ, գլխավոր շտաբների պետերը և այլ խորհրդատուներ։ Յալթայի կոնֆերանսին որպես խորհրդական մասնակցում է նաև ռազմաօդային ուժերի գծով ավիացիայի մարշալ Ս. Խուդյակովը (Ա. Խանֆերյանը)։ Կոնֆերանսը, ինչպես հայտնի է, մշակեց ֆաշիստական Գերմանիայի վերջնական ջախջախման գործողության ծրագիր։ Այդ ծրագրի համաձայն բանակները սկսեցին գործել ավելի ինտենսիվորեն։

Ֆաշիստական Գերմանիայի ջախջախումից և վերջնական կապիտուլյացիայից հետո, ավիացիայի մարշալ Խանֆերյանը փոխադրվում է Հեռավոր Արևելյան ռազմաճակատ։ Այստեղ նա մեծ հաջողությամբ ղեկավարում է 12-րդ ավիացիոն բանակի օպերացիաները։ Նրա օդաչուները մեծ քաջագործություններով աչքի են ընկնում սովետական զորքերի կողմից ճապոնական Կվանտունյան բանակի ջախջախմանը, որը նշվում է Գերագույն Գլխավոր հրամա-

նատարի 1945 թ. օգոստոսի 23-ի հրամանում, և շնորհակալություն է հայտնվում բանակի ողջ անձնակազմին։

Այսպիսին է Արմենակ Խանֆերյանի կյանքի ուղին։ Դժբախտաբար նա կարճ ապրեց, կյանքն ավարտելով 49 տարեկան հասակում 1951 թվականին, դեռևս իր ուժերի ծաղկման շրջանում։ Խանֆերյանը իր ամբողջ ուժերն ու ընդունակությունները ի սպաս դրեց Սովետական հայրենիքի ազատության ու անկախության գործին։ Նա հայրենիքին զոհաբերեց նաև իր 14 տարեկան որդուն՝ Վիտյային, որը 1943 թ. սպանվեց ֆաշիստական գնդակից, Խարկովի տակ՝ հոր հետ մարտական թռիչք կատարելիս։

1957 թ. հունիսի 2-ին Խանֆերյանի կինը՝ Վառվառա Պետրովնան Մոսկվայից այցելում է իր ամուսնու գյուղը՝ Վերին Թաղլարը և պապական հարկի տակ նշում է կրտսեր որդու Սերգեյիկի[1] ծննդյան 14 տարին։ Այդ առթիվ հրավիրված խնջույքը վեր է ածվում համընդհանուր տոնախմբության։ Վառվառա Պետրովնան ի հիշատակ այդ օրվան գյուղի ակումբին նվիրում է երկու մեծ ջահ, որի լույսերի մեջ ողողված Վերին Թաղլարցիները մեծարում և փառաբանում են իրենց արժանավոր համագյուղացուն, ավիացիայի մարշալ Արմենակ Արտեմի Խանֆերյանի հերոսական անունն ու գործերը։

---

1 Սերգեյիկը Խանֆերյանի երկրորդ որդին է, որն այժմ ապրում է Մոսկվայի մոտ։